ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «28» 07 2025 թ № 1918-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի №355-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N355-Լ որոշման N2 հավելվածի 14-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի №355-Լ որոշմամբ հաստատված Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի ընդունումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագրի մոնիթորինգի իրականացման հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորագրող
ՆԱՐԵԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
2812880511

2025-07-28 15:48:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԿԱՏԱՐՈՂ՝

ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի հուլիսի 28-ի № 1918 Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի №355-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի № 355-Լ որոշմամբ հաստատված Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում մոնիթորինգի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Կարգը սահմանում է մոնիթորինգի հիմնական նպատակները, կազմակերպչական ձևաչափը, գործիքակազմը, գործընթացները, ժամկետները, ինչպես նաև մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները և արձագանքման ընթացակարգերը:

2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ

3. Մոնիթորինգն իրականացվում է անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով՝ Ծրագրի փուլերին և նպատակներին համապատասխան՝ ապահովելու Ծրագրի պահանջների և պայմանների պահպանման և դրա արդյունավետության շարունակական գնահատումը: Մոնիթորինգի եղանակներն են՝

1) **Նախնական մոնիթորինգ,** որն իրականացվում է դիմում-հայտերի ընդունումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան դրանց ստացման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, որպեսզի նախքան դիմումի-հայտի բավարարման օրը հնարավոր լինի լիարժեք ստուգել ներկայացված փաստաթղթերի և տվյալների ամբողջականությունը, իսկությունը և Ծրագրի պահանջներին համապատասխանությունը: Արդյունքներն ամփոփվում են եզրակացությամբ՝ դիմում-հայտի բավարարմամբ կամ մերժմամբ,

2) **Ընթացիկ մոնիթորինգ,** որն իրականացվում է դիմում-հայտի բավարարման օրվանից՝ փոխհատուցման ողջ ժամանակահատվածում: Ընթացիկ մոնիթորինգը ներառում է Ծրագրի՝ դիմում-հայտերի ընդունման պահից մինչև մոնիթորինգի իրականացումը տնտեսավարողների կողմից տրամադրված, ինչպես նաև տնտեսավարողներին, գերատեսչություններին կատարված հարցումների հիման վրա ստացված փաստաթղթերի, տեղեկանքների ու փոխհատուցման գումարների արժանահավատության ուսումնասիրության, ինչպես նաև ռիսկերի ու խնդիրների բացահայտման ողջ գործընթացը: Ընթացիկ մոնիթորինգն իրականացվում է՝ ապահովելու համար Ծրագրի պայմանների պահպանությունը և հնարավոր շեղումներին արագ արձագանքումը,

3) **Վերջնական մոնիթորինգ,** որը վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատումն է և իրականացվում է առնվազն տարին 1 անգամ, յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո, մինչև հաջորդող տարվա կիսամյակի ավարտը: Այս փուլում գնահատվում է ծրագրի ընդհանուր արդյունավետությունը՝ արտադրողականության բարձրացման և մասնագետների ներգրավման առումով:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ

4. Մոնիթորինգի կազմակերպման, համակարգման և իրականացման պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն): Սույն կարգի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված մոնիթորինգն իրականացվում է Մոնիթորինգի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից՝ կազմված նախարարության աշխատակիցներից և անհրաժեշտության դեպքում՝ ներգրավված այլ մարմինների ներկայացուցիչներից ու համապատասխան մասնագետներից և կազմվում է Եզրակացություն (Ձև 1), իսկ սույն կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատման մոնիթորինգն իրականացվում է Նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության կողմից:

5. Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով:

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

6. Մոնիթորինգի ընթացքում, Ծրագրի պահանջների պահպանման և արդյունքների վերահսկման նպատակով, կիրառվում է հետևյալ գործիքակազմը.

1) փաստաթղթերի ստուգում՝ ներկայացված փաստաթղթերի ամբողջականության, իսկության և Ծրագրի պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և գնահատում.

2) տվյալների համադրում՝ տնտեսավարողների (շահառուների) և բարձր որակավորում ունեցող մասնագետների վերաբերյալ տեղեկատվության ճշգրտում՝ Պետական եկամուտների կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և այլ մարմինների միջոցով.

3) ամփոփ հաշվետվության կազմում՝ Ծրագրի ընթացիկ, ինչպես նաև վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատման մոնիթորինգի իրականացման համար տվյալների հավաքագրում, վերլուծություն և ամփոփում՝ գնահատման և որոշումների կայացման նպատակով:

7. Մոնիթորինգի ընթացքում ստացված բոլոր անձնական տվյալները պաշտպանվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Տվյալների գաղտնիությունն ապահովվում է Հանձնաժողովի կողմից:

5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

8. Ծրագրի տնտեսավարողները՝ մոնիթորինգի իրականացումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ, դիմում-հայտում նշված էլեկտրոնային փոստի միջոցով, Հանձնաժողովի կողմից պետք է ծանուցված լինեն մոնիթորինգի գործընթացի մեկնարկի վերաբերյալ:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9. Մոնիթորինգի ընթացքում Ծրագրի յուրաքանչյուր շահառուի մասով հայտնաբերված խախտումները ամրագրվում են Արձանագրությամբ (Ձև 2) և ներառվում Մոնիթորինգի ամփոփ հաշվետվության մեջ (Ձև 3): Արձանագրությունը (Ձև 2) կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկ օրինակը տրվում է տնտեսավարողին:

10. Մոնիթորինգի արդյունքներով արձանագրված խախտումների (ներկայացված փաստաթղթերում անճշտություններ, անհամապատասխանություններ կամ կեղծիքներ և այլն) դեպքում՝ կախված խախտման տեսակից և իրավասության շրջանակից, կարող են կիրառվել հետևյալ միջոցները.

1) փոխհատուցման գործընթացի դադարեցում.

2) մինչև այդ վճարված փոխհատուցումների ամբողջ գումարի գանձում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի № 283-Ն որոշմամբ սահմանված կարգով.

3) տեղեկատվության փոխանցում իրավասու մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով գործի համապատասխան ընթացքն ապահովելու նպատակով:

7. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

11. Ամփոփ հաշվետվությունը ներառում է հետևյալ բաժինները՝

1) Ծրագրի իրականացման ընթացիկ վիճակի վերլուծություն.

2) հայտնաբերված խախտումների համառոտ նկարագրություն և առաջարկություններ՝ հայտնաբերված խախտումների վերացման, դրանց կրկնությունը կանխելու կամ դրանց համապատասխան ընթացք կամ լուծումներ տալու, ինչպես նաև Ծրագրի արդյունավետության բարձրացման և կազմակերպչական գործընթացների բարելավման վերաբերյալ:

12. Ամփոփ հաշվետվությունը կազմվում է մոնիթորինգի հանձնաժողովի քարտուղարի կողմից երկշաբաթյա ժամկետում՝ իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա:

13. Մոնիթորինգի ընթացքում կարող են կազմվել նաև միջանկյալ հաշվետվություններ:

14. Ամփոփ հաշվետվությունը կազմվում է մեկ օրինակից:

Ձև 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի №355-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շահառուի անվանում

ԲՈՈՒՄ-ի անուն/ազգանուն

Դիմում-հայտի ամիս ամսաթիվը

Մոնիթորինգի փուլ ☐ Նախնական / ☐ Ընթացիկ /

Մոնիթորինգի ամսաթիվ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա. Փաստաթղթերի ամբողջականություն

☐ Լիովին ամբողջական

☐ Թերի (մանրամասն նկարագրություն՝ _____)

Բ. Փաստաթղթերի արժանահավատությունը

☐ Արժանահավատ (մանրամասն նկարագրություն՝ _____)

☐ Կասկածելի (մանրամասն նկարագրություն՝ _____)

Գ. Ծրագրի պահանջներին համապատասխանություն

☐ Ամբողջությամբ համապատասխանում է

☐ Չի համապատասխանում (մանրամասն նկարագրություն՝ _____)

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

_____

_____

_____

ՀԱՎԵԼՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՇՈՒՄՆԵՐ

_____

_____

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (Նախնական/Ընթացիկ մոնիթորինգի արդյունքներով)

☐ Դիմում-հայտը հաստատվում է

☐ Դիմում-հայտը մերժվում է

Դիմում-հայտի մերժման հիմքերը (հիմնավորում)՝

_____

_____

_____

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անուն, ազգանուն	**Պաշտոն**	**Ստորագրություն**

«____» _____ 202__ թ.

Ձև 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի №355-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շահառուի անվանում

ԲՈՈՒՄ-ի անուն/ազգանուն

Դիմում-հայտի ամիս ամսաթիվը

Մոնիթորինգի փուլ ☐ Նախնական ☐ Ընթացիկ

Մոնիթորինգի ամսաթիվ

Արձանագրված խախտումներ
☐ Չկան
☐ Հայտնաբերվել են
Եթե կան՝ նկարագրություն և բնույթ՝

_____

_____

Արձանագրված խախտումների (ներկայացված փաստաթղթերում անճշտությունների, անհամապատասխանությունների կամ կեղծիքներիև այլն) դեպքում՝ կախված խախտման տեսակից և իրավասության շրջանակից կիրառվող միջոցների վերաբերյալ առաջարկություններ

1) փոխհատուցման գործընթացի դադարեցում ☐

2) մինչև այդ վճարված փոխհատուցումների ամբողջ գումարի գանձում՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի № 283-Ն որոշմամբ սահմանված կարգով ☐

3) տեղեկատվության փոխանցում իրավասու մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով գործի համապատասխան ընթացքը ապահովելու նպատակով ☐

Այլ դիտարկումներ

_____

_____

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անուն, ազգանուն	Պաշտոն	Ստորագրություն

«____» _____ 202__ թ.

Ձև 3

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի №355-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

Ընդհանուր տեղեկություններ

- Մոնիթորինգի ժամանակահատվածը՝ _____
- Մոնիթորինգի տեսակն ու փուլը՝ □ նախնական □ ընթացիկ □ վերջնական
- Մոնիթորինգի հանձնաժողովի կազմը՝

Նախագահ՝ _____

Անդամներ՝ _____

_____

_____

_____

Քարտուղար՝ _____

1. Ծրագրի ցուցանիշների համառոտ նկարագրություն

(նշվում է ծրագրի գնահատման ենթակա ցուցանիշները՝ արտադրողականության աճ, մասնագետների ներգրավման ծավալներ և այլն)

2. Մոնիթորինգային միջոցառումների նկարագրություն

(ներկայացնել իրականացված գործողությունները՝ այցեր, փաստաթղթերի ստուգում, հարցումներ, վերլուծական աշխատանքներ և այլն)

Նիստերի թիվ և ամսաթվեր՝ _____

Դիտարկումների ծավալ՝ _____

Հարցումների քանակ՝ _____

3. Հայտնաբերված խախտումների համառոտ նկարագրություն

(նշել յուրաքանչյուր հայտնաբերված խախտման էությունը, շահառուի անվանումը, կարճ նկարագիրը, չափը և այլն)

Շահառուի անվանում	Խախտման բնույթը	Օրինակներ և փաստեր

4. Առաջարկներ

ա) Խախտումների վերացման և կրկնությունը կանխելու վերաբերյալ

(ներկայացնել առաջարկներ շահառուների կամ ծրագրի շրջանակում գործողությունների ուղղման վերաբերյալ)

բ) Ծրագրի կազմակերպչական և այլ գործընթացների բարելավման վերաբերյալ

(նշել հնարավոր փոփոխություններ կամ բարելավման ուղղություններ)

Եզրակացություն

(հակիրճ ամփոփում՝ գնահատական ծրագրի ընթացիկ վիճակի և արդյունավետության վերաբերյալ)

Հաշվետվության կազմման ամսաթիվ՝ _____

Մոնիթորինգի հանձնաժողովի անդամներ՝